

ՄԱՍԼՈՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼԵՁՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՑԹԻ
ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ
Օգոստոս 2018

Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան, Վենետիկի “STUDIUM MARCIANUM” Հաստատութեան հետ գործակցաբար, կազմակերպած Հայ Լեզուի եւ Մշակութի ամառնային խտացեալ դասընթացը տեղի պիտի ունենայ Յուլիս 30 – Օգոստոս 14 թուականներուն: Քննութիւնները՝ Օգոստոս 14ին կէսօրէ վերջ: Ժամանում՝ Յուլիս 29ին, մեկնում՝ Օգոստոս 15-16ին:

Դասընթացը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ: Դասերը տեղի կ'ունենան երկուշաբթիէ Շաբաթ, օրը հինգ պահ՝ առաւօտեան: Դասընթացի ամբողջական տեւողութիւնն է 65 դասաժամ: Դասերու ներկայութիւնը ՊԱՐՏԱԴԻՒՄ է: Մասնակցութեան համար պահանջուած նուազագոյն տարիքն է 18: Հնարաւոր բացառութեան համար պէտք է մասնաւոր դիմում կատարել Դասընթացի Վարչութեան: Դիմումները պէտք է կատարուին ԱՆՁԱՄԻ ԵՒ ԳՐԱԽՈՐՔ, նշելով միշտ Հեռախոսի թիւ մը եւ ԵԼԳՐԱՅԻՆ (EM) հասցէ մը: Դասընթացին զուգահեռ տեղի պիտի ունենան մշակութային այլեւայլ ձեռնարկներ: ՓԱՓԱՔՈՂՆԵՐՈՒՆ, կէսօրէ վերջերը, ԶՐԻԱՔԱՐ ՊԻՏԻ ԱԻԱՆԴՈՒԻՆ նաեւ՝ ԴՈՒԴՈՒԿԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՂԱՆՈՅԻ ԴԱՍԵՐ:

Արձանագրութեան սակն է՝ 800 € կամ համապատասխանը՝ տարարժոյթով ըստ օրուան սակին: Այս գումարին 500 եւրոյի բաժինը պէտք է վճարուի կանխաձեռն՝ մինչեւ Փետրուարի 28ը: Այլ թուականէն վերջ պէտք է վճարուի 550 եւրոյ մինչեւ Յունիսի 30ը, որ արձանագրութեան համար վերջին պայմանաժամն է: Արձանագրութեան մնացեալ մասը ՊէՏԲ է ՎՃԱՐՈՒԻ ԱՆՊԱՅՄԱՆ ՄՈՒՏՔԻ ՕՐԸ: ՎԱՐԿԱԹՂԹԱՅԻՆ վճար (Credit card) չ'ընդունուիր: 10% զեղչ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացին, գոնէ երկու անգամ: Նոյն զեղչը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մեկուն (ծնողք, քոյր, եղբայր, կողակից): **ԿԱՏԱՐՈՒԱԾ ՎՃԱՐՈՒՄԸ ՈՐԵՒԷ ՊԱՏՃԱՌՈՒՎ ԶԻ ՎԵՐՄԴԱՐՁՈՒԻ, ԲԱՅԻ ՀԱՄԱՍԻ ԵՒ ՃԱՄԲՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱՅԻՆ ԿՐԻՄԻՆԱԿԱՆ ԱՊՐԱՊՈՒՄ:** Դրամատնային փոխանցումով (bank transfer) վճարելու համար, յետ դիմումի ըմբռնելութեան՝ քարտուղարութիւնը պիտի ուղարկէ դրամատնային հաշուի հարկաւոր տեղեկութիւնները (հաշուհամար, IBAN եւլն.): Դրամատնային բոլոր ծախսերը դիմողին կը պատկանին:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած՝ խոհանոցային յարմարութիւններով, Յուլիս 29-Օգոստոս 15 ներառեալ: Ամբողջ այս շրջանին համար, բնակութեան սակն է՝ 810 € անձ գլուխ երկու հոգինոց սենեակի մէջ, իսկ 980 € առանձին սենեակի մէջ, երկու պարագային ալ՝ լոգարանային եւ զովասարքչային յարմարութիւններով: Բնակութեան վճարը, տուեալ ժամանակաշրջանի ընթացքին, ենթակայ չէ օրական հաշուարկումի: Անոնք որ կը խորհին նշեալ թուականներէն աւելի առաջ ժամանել կամ յետոյ մեկնիլ, պէտք է իրենք հոգան իրենց բնակութեան պայմանները այդ օրերուն համար:

Պո-Արաքս Ընկերակցութիւնը կրնայ տրամադրել քիչ թիւով կրթաթոշակներ: Ով որ կը փափաքի դիմել կրթաթոշակի համար, պէտք է որ դիմումագիրը դրկէ՝ իր կենսագրական բնութագրին (curriculum) ու մէկ երաշխաւորագրի հետ՝ Դասընթացի Վարիչին՝ Տ. Լեւոն Արք. Զէքիեանի՝ kybhs@gmail.com, ու փոխ-Վարիչին՝ Դոկտ. Բենեդետտա Կոնտինի՝ bendettacon@gmail.com:

Յաւելեալ Տեղեկութիւններու համար ելգիր մը ուղարկել հետեւեալ հասցէներուն՝ daniela@padus-araxes.com; benedettacon@gmail.com: Ի հարկին հեռաձայնել բջիջայնի թիւերուն՝ +39.347.4562981 (Դանիելա) եւ +39.349.0986027 (Բենեդետտա) երկուշաբթի եւ Հինգշաբթի առաւօտները ժամը 10:30-13:00, և կամ երեքշաբթի, Զորեքշաբթի և Ուրբաթ իրիկունները ժամը 20:00-21:30 (ԻՏԱԼԻՈՅ ԺԱՄՈՎ): Կը խնդրուի լաւ ստուգել եՐԿԻՐՆԵՐՈՒՄԻ ԶԵԻ ԺԱՄԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ: